

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 21

ՀՀ մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

14.09. 2020թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Գ.Մարկոսյանը- -մարզպետի տեղակալ
- Վ.Խաչատրյանը -մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ
- Ա.Բեջանյանը, Լ.Վարդանյանը, Ա.Մատինյանը, Վ.Ղարսայանը, Կ.Աշրաֆյանը, Է.Հախվերդյանը, Ա.Թումանյանը, Ա.Բաղդասարյանը, Ա.Գասպարյանը, Ս.Գրիգորյանը - ստորաբաժանումների ղեկավարներ
- Հ.Այվազյանը -մարզպետի խորհրդական

Օր ա կ ա ր գ ու մ`

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին
(Լոռու մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ)
2. Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետարանի ստերաբաժանումների ղեկավարներին`

Հսկողական գրությունների և դիմումների պատասխանները, անհրաժեշտության դեպքում, նախօրոք քննարկել համակարգողների և պատասխանատուների հետ, թույլ չտալ ժամկետների ուշացումներ և միջոցներ ձեռնարկել, որպեսզի պատասխանները լինեն սպառիչ, բովանդակալից ու ամբողջական:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ռ.Հարությունյանին, մարզպետարանի քաղաքաշինության պետի պաշտոնակատար Վ.Ղարսայանին`

Քննարկել և ներկայացնել տեղեկատվություն և առաջարկություններ Մարց համայնքի նախակրթարանի վերաբերյալ: /ժամկետ` 5 օր/

3. ՀՀ Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար Լ.Վարդանյանին`

Ներկայացնել տեղեկատվություն և առաջարկություններ Լորուտ համայնքի բուժկետի վերանորոգման և ջրամատակարարման հարցերի վերաբերյալ: /ժամկետ` 5 օր/

4. ՀՀ Լոռու մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Կ.Աշրաֆյանին`

Ներկայացնել տեղեկատվություն համայնքներում առկա թափուր հաստիքների համար հայտարարված մրցույթների և նիստերից բացակայող ավագանու անդամների հետագա պաշտոնավարման և հրաժարականների ներկայացման վերաբերյալ: /ժամկետ՝ 5 օր/

ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

 Invalid signature

X



ԳԱՅԱՆԵ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Գ.ՄԱՐԿՈՍՅԱՆ

Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99